քան և հինգ պահել 'ի միջի իւրեանց վարպետս երկուս, մինն վասն ուսուցանելոյ մանկանց հայոց բառիւ և տառիւ ընթերցմունս, և մի վասն ուսուցանելոյ տղայոց կրթութիւն արհեստն զինուորութեան, և ամենայն արու և էգ պարտաւոր լինի ուսանիլ ընթերցմունս, և ամենայն արու ընթերցմունս և արհեստս զինուորութեան ամենեքեան միակերպ առանց ոչինչ զանազանութեան։

ԳԼՈՒԽ ՃԲ.

Կարգ լիցի համբելոյն ժամս աւուրց և գիշերոյ մերոյ 'ի մէջ գիշերէն որում ընթանայ արեգակն ընդ ծագիլ առաւօտս յիշեսցի մի ժամ առաւօտեան մինչև 'ի կէսօր, որում գտցի արեգակն 'ի վերայ գլխոյ մերոյ եղիցի երկոտասան ժամ աւուրց, և 'ի անկանիլն արեգական ընդ արև մուտս յետ կէս աւուրց համարեսցի մի ժամ երեկոյեան մինչև 'ի մէջ գիշերն յիշեսցի երկոտասան ժամ գիշերոյ։

ԳԼՈՒԽ ՃԳ.

Տարեմուտ տարոյն 'ի յամսեան նաւասարդի եղև մէնջ ազգին հայոց, որում ոչ համեմատի ընդ չորս եղանակի տարւոյն, և ոչ ցուցանէ սկիզբ ոչ գառնան, ոչ ամառան, ոչ աշնան, և ոչ ձմե-